ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИА
РЕГИОН АРАГАЦОТН
СЕЛЬСКАЯ ОБШИНА
ОРГОВ

հեռ. 077-21-79-19

23.12. 2019 թ.
N 82

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Ձեզ ենք ներկայացնում 16/12/2019 թվականի ավագանու թիվ 7 արտահերթ նիստի N 20, N 21, N 22, N23 , N24, N25, N26 որոշումները:
Առդիր 10թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 20

ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ-7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հ.Հ. օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ պարբերության պահանջներին համապատասխան՝ Օրգովի համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

ՀաստատելՕրգովի գյուղական համայնքի ավագանու 2019թ-ի դեկտեմբերի 16-ի արտահերթ նիստի օրակարգը բաղկացած հետևյալ հարցերից

1. Օրգով համայնքի 2019թ-ի տարեկան հաստատված բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2. Օրգովի գյուղական համայնքի 2020թ-ի բյուջեի նախագծի քննարկման և հաստատման մասին:
3. Օրգովի համայնքի 2020թ-ի <<Տեղական տուրքերի և վճարների>> դրույքա-չափերի սահմանման մասին:
4. Օրգովի համայնքի ղեկավարի 2020թ-ի պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին:
5. Արագածոտնի մարզի Օրգովի գյուղապետարանի աշխատակազմի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
6. Օրգովի գյուղական համայնքի 2019թ-ի հիմնական և շրջանառու միջոցների գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:

7. Սույն վորոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Համայնքի ավագանի՝
1. Ամիրյան Արսեն
2. Քամալյան Գևորգ
3.Թովմասյան Գևորգ
4. Մնացականյան Գրիգոր
5. Տոնոյան Էմին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 21

ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և <<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1 Օրգովի գյուղական համայնքի 2019թ-ի տարեկան հաստատված բյուջեում կատարել փոփոխություն համաձայն կից ներկայացվող հավելվածի :

| Հ Հ | Բյուջետային ծախսի տնտեսագիտական դասակարգման հոդվածները | Հաստատված բյուջե | Բյուջեի փոփոխության Բաժին, խումբ, դասակարգում | Ավելացում /պակասեցում/ | Ճշտված բյուջե |
|---|---|---|---|---|---|
| 1 | 4221 | 0 | 01-01-01 | +20.0 | 20.0 |
| 2 | 4234 | 80.0 | 01-01-01 | +15.2 | 95.2 |
| 3 | 4252 | 100.0 | 01-01-01 | +30,0 | 130.0 |
| 4 | 4264 | 360 | 01-01-01 | +150.0 | 510.0 |
| 5 | 4269 | 0 | 01-01-01 | +200.0 | 200.0 |
| | Եկամտայի մաս | | | | |
| 1 | Քաղ. կամ իրավ. անձանց սեփակ. հանդ. ինքնակամ շինութ. օրինականացում | 0 | 28-62-00 | +415.2 | 415.2 |

2 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Համայնքի ավագանի՝
1. Ամիրյան Արսեն
2. Քամալյան Գևորգ
3.Թովմասյան Գևորգ
4. Մնացականյան Գրիգոր
5.Էմին Տոնոյան

. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 22

ՕՐԳՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Օրգովի գյուղական համայնքի 2017- 2021թթ սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Օրգովի գյուղական համայնքի 2020թ-ի տարեկան բյուջեի նախագծը համաձայն կից ներկայացված հավելված N 1:

Համայնքի ավագանի կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. Ամիրյան Արսեն
2. Քամալյան Գևորգ
3.Թովմասյան Գևորգ
4. Մնացականյան Գրիգոր
5.Էմին Տոնոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 23

ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ_Ի <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ>> ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Մանուկյան /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18- րդ հոդվածի 1-ին մասի 18-կետի պահանջներով *համայնքի ավագանին*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝*

1. Սահմանել Օրգովի գյուղական համայնքի 2020թ-ի <<Տեղական տուրքերի և վճարների>> դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ-ի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանի՝ | կողմ-5 | Դեմ- 0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|

1. Ամիրյան Արսեն
2. Քամալյան Գևորգ
3. Թովմասյան Գևորգ
4. Մնացականյան Գրիգոր
5. Տոնոյան Էմին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
16 դեկտեմբերի 2019 թվականի N24

ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Առաջնորդվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հ.Հ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-կետի պահանջներով *համայնքի ավագանին*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1.Համայնքի ղեկավարի 2020թ. պաշտոնային դրույքաչափը սահմանել 200.0 հազ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ-ի Հունվարի 1-ից:

Համայնքի ավագանի՝ կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. Ամիրյան Արսեն
2. Քամալյան Գևորգ
3.Թովմասյան Գևորգ
4 Մնացականյան Գրիգոր
5. Տոնոյան Էմին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ

16 դեկտեմբերի 2019 թվական N 25

### ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ Օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջով՝ Օրգով համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել Օրգով համայնքային սեփականություն համարվող ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանի՝ կողմ-5 դեմ- 0 ձեռնպահ-0

1. Ամիրյան Արսեն
2. Քամալյան Գևորգ
3. Թովմասյան Գևորգ
4. Մնացականյան Գրիգոր
5. Տոնոյան Էմին

Օրգով համայնքի ղեկավար՝ Ա.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 դեկտեմբերի 2019թվականի N26

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Ա. Մանուկյան /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18- րդ հոդվածի 1-ին մասի 28-կետի և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով *համայնքի ավագանին*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝*

1. Հաստատել 2020թ-ի Արագածոտնի մարզի Օրգովի համայնքապետարանի աշխատակազմի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանի կողմ-5 Դեմ- 0 Ձեռնպահ-0

1. Ամիրյան Արսեն
2. Քամալյան Գևորգ
3.Թովմասյան Գևորգ
4 Մնացականյան Գրիգոր
5. Տոնոյան Էմին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
Օրգովի համայնքի ավագանու
2019թ-ի դեկտեմբերի 16- ի N 26

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՐԳՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9:
2. Կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 8 :

| Հ/Հ | Պաշտոնը | Ծածկագիրը | 2020 | | Ծնն. թիվ |
|---|---|---|---|---|---|
| | | | միավորը | դրույքաչափ դրամ. | |
| 1. | Համայնքի ղեկավար | | 1 | 200000 | 1979 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 2. | Աշխ. քարտուղար | 1.2-1 | 1 | 160000 | 1991 |
| 3. | Առաջ. մասնագետ | 3.1-1 | 1 | 136000 | 1958 |
| 4. | Առաջ. մասնագետ | 3.1-2 | 1 | 136000 | 1976 |
| 5. | Առաջ. մասնագետ | 3.1-3 | 1 | 136000 | 1966 |
| | Ընդամենը | | 5 | 768000 | |

## ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գրադարանավար | --- | 1 | 90000 | 1956 |
| 2. | Փականագործ | --- | 1 | 93000 | 1989 |
| 3. | Պահակ | --- | 1 | 93000 | 1989 |
| | | պայմանագրային ծառայություն | | | |
| 4 | Համայնքի անասնաբույժ | --- | ---- | 37000 | 1954 |
| | Ընդամենը | -- | 8 | 1081000 | |

Օրգով համայնքի ղեկավար՝ Ա. Մանուկյան

# 2020Թ. ՕՐԳՈՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԵՐ /դրամ/

Հաստատված Օրգով համայնքի
ավագանու

16 դեկտեմբերի 2019թվականի N23 որոշմամբ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ
բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ
բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքեր գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքների նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքեր գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև 2 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառ կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ

ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար` մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառ կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,
Համայնքի տարածքում` առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար` տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է`
ա) առևտրի օբյեկտների համար` 25 000դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 50 000դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար` 200 000դրամ
դ) խաղատների կազմակերպման համար` 500 000դրամ
ե) շահումով խաղերի կազմակերպման համար` 250 000-500 000 դրամ. 250000
զ) վիճակախաղերի կազմակերպման համար` 100 000դրամ:

**ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԵՐ /դրամ/**

Օրգով համայնքում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները
ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000
բ/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և նման աշխատանքների համար` տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000
գ/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապվածծախսերի փոխհատուցման համար` մասնակիցներից վճար 10000
դ/կենցաղային աղբի համար բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ